

ՓՐԻԴՐԻԽ ԲՈՂԵՆՂՏԵՂԻՏ

Խաչատուր Աբովեանի մասին.

Ֆրիդրիխ Բոլենշտեդտի անունը պատուաւոր տեղ է բռնում անցեալ դարի կիսերում ապրող գերմանացի բանաստեղծների և ճանապարհորդագրողների մէջ. Դէպի Արեւելք կատարած իր ճանապարհորդութեան տպաւորութիւններն ու ուսումնասիրութիւնները հրատարակել է նա իր Tausend und ein Tag (Հազար և մէկ օր) անունով եռահատոր աշխատութեան մէջ ¹⁾։

Բոլենշտեդտի արեւելեան ճանապարհորդութեան մէջ մեծ տեղ է բռնում Արարատեան երկիրը, և նրա լիշեալ աշխատութեան մէջ՝ հալ ժողովուրդը, երկիրը, եկեղեցին, պատմութիւնն ու զրականութիւնը։ Իսկ որ մեզ համար առանձնակի և կարևոր նշանակութիւն ունի նրա աշխատութեան մէջ՝ այդ ալն է, որ Բոլենշտեդտ ալստեղ խօսում է նաև խաչատուր Աբովեանի մասին։ Հատուկտոր հատուածներից զատ նուիրում է նրան մի ամբողջ գլուխ։ Իսկ այդ, որքան ինձ լալտնի է, մինչև այժմ ի նկատի չէ առնուել Աբովեանի կեանքը նկարագրուելիս։ Աբովեանի միակ կենսագրող և նիւթեր հաւաքող Ն. Ներսէս քահ. Տէր-Կարապետեանի «Խաչատուր Աբովեան» կենսագրականի մէջ ²⁾ Բոլենշտեդտի վկայութիւնը տեղ չէ բռնում։ Այնտեղ միայն ասում է, որ Բոլենշտեդտ գեղեցիկ ընդունելութիւն է գտել Նրեանում Աբովեանի մօտ և հալկական կեանքը նկարագրել (եր. 101)։ Իսկ թէ ուրիշ տեղ լիշատակուած է Բոլենշտեդտի վկայութիւնը, գոնէ մեզ լալտնի չէ։

¹⁾ Մեր ձեռքի տակ գտնուում է այդ աշխատութեան հանրամատչելի հրատարակութիւնը Բերլին 1865. Բոլենշտեդտ ունի նաև «Die volker des Kaukasus» (Պովլասի ժողովուրդները) անունով աշխատութիւնը, Ա.

²⁾ Ցե'ս շէումայ թ. տ. 21

Ուստի և կարևոր ենք համարում Բողենշտեդտի՝ Աբովեանի *) մասին գրածի հետ ծանօթացնել «Լուսավորչի ընթերցողներին», որ և կարող է նկատի առնուել Աբովեանի ապագալ կենսագրողից:

1844 թուականի գարնանը, մարտ ամսին, Բողենշտեդտ ճանապարհուում է Տիֆլիսից դէպի Երևան և Էջմիածին: Երեւանում որոնում է նա Աբովեանին, «Պարրոտի լալտնի ուղեկցին Արարատ սարը բարձրանալիս»: Նա գտնում է Աբովեանին և սա սիրալիր կերպով առաջնորդում է գերմանացի ճանապարհորդին Երևանում: Ապա ուղեկցում է նա Բողենշտեդտին դէպի Էջմիածին, որտեղ և նա սիրալիր ընդունելութիւն է գտնում կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոսի կողմից. «իրեն կաթողիկոսին», — ասում է Բողենշտեդտ — «համարեա ութսունամեակ Ներսէսի հետ ծանօթացել էի ես արդէն առաջուց: Մոսկվայում, որտեղ ապրում էր նա բաւական ժամանակից ի վեր»: Բողենշտեդտ միանգամայն հիացած է մնում վանքի դէպի նա ցոյց տուած վերին աստիճանի հիւրասէր ընդունելութիւնից, որի համար և նա մասամբ Աբովեանի աջակցութեանն ու միջնորդութեանն է պարտաւորւում:

Ընչպէս որ Արարատը, վեհապանծ Նոյեան սարը մի ժամանակ հանդիսանում էր իբր միջնորդ երկնքի և երկրի մէջ, այնպէս և Էջմիածինը, Արարատի ոտքերի տակ գտնուող այդ հին վանքը, այդ անմատչելի ամրոցն էր, որտեղ քրիստոնէութիւնը մէկ և կէս հազարամեակից աւելի միջոց իր մնալուն բնավարը դտաւ: Եւ ինչպէս որ ջրհեղեղի ակիքները փշուռեցին Արարատին զարնուելով, այնպէս որ Էջմիածնի պարիսպների տակ փշուռեցին այն ազգերի ակիքները, որոնք Մահմեդի դրօշակի տակ ողողեցին այս երկիրները: Այսպիսի գեղեցիկ խօսքերով է պատկերացնում Բողենշտեդտ Էջմիածնի նշանակութիւնը (Ա հատ. 165 եր.): Բողենշտեդտ Աբովեանի

*) Զգիտեմ ինչպէս բացատրել այն հանգամանքը, որ Բողենշտեդտ իր զրուածքի Ա. հատորում, ուր նկարագրում է նա իր ճանապարհորդութիւնը Երևան և Էջմիածին և հանդիպումը Աբովեանի հետ, ամեն անգամ սրա մասին խօսք լինելիս նրան փոխանակ Աբովեանի Օբլովեան է անուանում. այն ինչ իր զրուածքի Գ. հատորում որտեղ նա մի ամբողջ գլուխ է նուիրում Աբովեանի կեանքին, ուղիղ տաւով է լիշատակում նորան, այն է՝ Աբովեան:

հետ վերադառնում է Երևան Էջմիածնից, քաղցր տպաւորութիւնների տակ, Բողենշտեղտ ծրագրում է ժողովել հալկական, քրդական և թրքական ժողովրդական-երգեր: Այս առթիւ աւտում է նա... Ազնիւ Աբովեանի եռանդուն ջանքերին եմ պարտական գլխաւորապէս, որ իմ այս լուսերը ղոնէ մասամբ իրականացան... Աբովեանն իր վրայ առաւ ժողովել և ուղարկել ինձ Երևանի սարդարի պալատում սովորական ժողովրդական երգերը: Եւրոպա ճանապարհորդուելուցս առաջ արդէն ստացաւ ես Աբովեանից չիաժ ժողովրդական երգերի ժողովածուի առաջին տետրը, գրուած իր ձեռքով, գերմաներէն լիակատար բացադրութիւններով հանդերձ: Եւ նա խոստանում էր, որ շուտով կուղարկէ կրկին մի քանի արդարեւ տետրեր (հ. Ա. եր. 188): Երևանում Բողենշտեղտ իջած է լինում իշխան (fürst, — մէլիք ? բէգ ?) :-ի տանը: «Ալդտեղ» — ասում է Բողենշտեղտ — «Աբովեան ուրախութիւն էր պատճառում մեզ, որքան իր պալատաներն (verhältnisse) աւել թուլ էին տալիս իր՝ մեզ համար ալնքան կրթիչ ներկայութեամբ: Ներկայ եղող հալերի համար մեծ բաւականութիւն էր լսել մեր բերնից գովասանութիւններ իրենց երեխաւոց վարժապետի վերաբերմամբ: Աւելի ևս ուրախանում էին նրանք, երբ լսում էին մնզնից, որ ջահէլ տղաները (Աբովեանի աշակերտները) մեզ հետ բոլորովին ազատ կերպով գերմաներէն էին խօսում (Ա. հ., եր. 191—192):

Այս տեղեկութիւններն Աբովեանի մասին գտնում ենք Բողենշտեղտի աշխատութեան Ա. հատորի մէջ ցիր ու ցան: Իր աշխատութեան Գ. հատորի մէջ (եր. 24—30) սակալն Բողենշտեղտ նուիրում է Աբովեանի կեանքին մի գլուխ, որն և ամբողջովին առաջ ենք բերում ստորև:

Աբովեան.

Հալաստանից վերադառնալուցս լետով երկու անգամ գրել էի ես Աբովեանին՝ նրան լիշեցնելու իր խոստումը, այն է, որ նա ուղարկէ ինձ քրդական ժողովրդական երգերի շարունակութիւնը և Քէշիշ-Օղլու՝ Թուրքերէն լեզուով գրած ոտանաւորները: Նրան լալտնի էր, որ ես մտադիր եմ այն գերմաներէնի թարգմանել և զրանից գոլանալիք դրամական արդիւնքը նրան լանձնել իր կարօտ վիճակը բարելաւելու համար: Այս պատճառով և ինձ անհասկանալի էր մնում, թէ ին-

չու իմ բոլոր նամակներն անպատասխան էին մնում, մինչև որ ես, այս երկի առաջին լուս տեսնելուց մի քիչ լետու, տըխուր պատճառն իմացալ, իմ հին ծանօթներից մէկը, պետական խորհրդական Ռոսկովչէնկով թիֆլիսեցի, երբ 1850 թուի ամառը հանքալին ջրեր գնալիս Բերլինում ինձ ալցեցինց՝ լալտնեց ինձ, որ Աբովեանն արդէն մի երկու տարի է ինչ անլալտացել է և, չնայած ամեն տեսակ քննութեան, ամենին չէ գտնուել հետքը։ Ռոսկովչէնկոն, Աբովեանի նախկին ստորագրող պաշտօնեան (Vengentzte), մտադրուած էր եղել նրան Թիֆլիս կանչել, նրան մի աւելի լաւ պաշտօն գտնելու համար։ Թիֆլիսի գիմնադրիւսի մի վրացի օգնական ուսուցիչ, Տուրկեստանով, ուղարկում է Երեան՝ Աբովեանին ժամանակաւորապէս փոխարինելու համար։ Երեան հասնելով՝ նա տեղեկանում է, որ Աբովեանը, հակառակ միանգամայն իր սովորութեան, առաւօտ վաղ հեռացել է սննդ և դեռ չէ վերադարձել։ Տուրկեստանով հետևեալ օրը երկրորդ անգամ անցելում է Աբովեանի կնոջը արտասուքի մէջ խեղդուած։ Նա ամբողջ գիշերն իր ամուսնուն է որոնել։ ոչ ոք տեղեկութիւն չունի նրա մասին, ոչ ոք չէ տեսել նրան։ Այն օրից ի վեր անլալտացել է նա և ալ ևս ոչինչ չէ լսուել նրա մասին։

Հաւանօրէն նա ինքն իրեն սպանել է, որովհետև հէնց այն ժամանակը, երբ ես նրա հետ ծանօթացալ, խիստ թշուառ և անլուս դրութեան մէջ էր նա մի կողմից ապրուստի հոգսերի պատճառով և մյուս կողմից՝ իր անձնուէր դործնէութեան չնչին դնահատութեան պատճառով։

Իր վերջին նամակով գրում էր ինձ Աբովեանը, որ նա վճռել է թողնել ռուս պետական ծառայութիւնը, Հայաստանի ներքին մասը գնալ և ալնտեղ իր պապերի պէս երկրագործութեամբ ապրել, որովհետև նրա չնչին եկամուտները չեն բաւականացնում քաղաքի պահանջներին, իսկ աւելի ևս սպասել իր վիճակը որևէ կերպ բարւոքելու համար՝ ալդ նրան աւելի խոր թշուառութեան մէջ կձգէր։

Ձախող փորձառութիւններն էին, որոնք տաղանդաւոր և ջանասէր մարդուն այս վճռին էին հասցրել։ Նրա կեանքի պատմութիւնը չափազանց նշանակալից է, ալդ պատճառով և անկարելի է ալդ կեանքից մի քանի դէպ չտալ։

Աբովեան ծնուել է ալս (19-րդ) դարի սկզբում Երեանի մօտ գտնուող մի գիւղում, որի անունն ես մոռացել եմ

(Քանաքեռ). նրա ծնողներն աղքատ էին: Որովհետև նա հենց փոքր մանկութիւնից ցոյց էր տալիս մեծ փափագ սովորելու, ուստի և նա շատ վաղ գալիս է Էջմիածնի վանքը, ախտեղ նախապատրաստուելու հոգևորական դասնալուհամար: Արարատի ոտքերի տակ զոնուող ալս լալտնի հին պատրիարքական աթոռում իշխում էր ալն ժամանակ Եփրեմ կաթողիկոսը,—մի սառնասիրտ, բարձրամիտ անձնաւորութիւն, որը խիստ վարիչ էր ալն զէպքում, երբ բանը, վանքի միաբանների և սաների կեանքում, ձեւին և արտաքինին էր վերաբերում. ալն ինչ նա արտանց թշնամի էր ճշմարիտ քաղաքակրթութեան և գիտութեան, իր գիտութեան չափը նա զաղտնի էր պահում. իսկ նրա եպիսկոպոսների և վարդապետների մէջ ամենազիտուն համարում էին նրանք, որոնք փոքր ի շատէ հասկանում էին Ս. Գրոց զրաբար թարգմանութիւնը:

Ալն ժամանակ վանքը դեռ չունէր Եւրոպական քաղաքակրթութեան արտաքինը, որը ստացաւ նա կալսերական տան մի քանի անդամների ալցելութիւններից սկսած: Աքովեանը ասաց ինձ և Ռին*), երբ նա մեզ զէպի Էջմիածին էր ուղեկցում, թէ կարծէք նրա զլիւին ստուը ջուր էին մաղում, երբ նա ոտք էր դնում հին պարիսպներից ներս,—ալնքան անտանելի են եղել ալն տպաւորութիւնները, որոնք ստացել է նա իր պատանկութեան հասակում և որոնք երբէք ալլա չէին չքանում նրա լիշողութիւնից: Փախստեան զանազան փորձեր, որոնք նկատուել էին, առիթ էին տուել որ նրա հետ աւելի խիստ վարուեն, քան առաջ:

Այսպէս մեծացաւ նա լացի, աղօթքի և պահքի մէջ, մի վալրենի, ամեն ազնիւ բանի համար բթացած, անբնական հեշտութեանց մէջ ապականուած մի շրջապատում, աւելի օգուտ չստանալով քան ալն, որ նա մի փոքր զրաբար սովորեց ալնտեղ. Նա արդէն կիսասարկաւագի (Diakon) աստիճանի էր հասել, երբ Դորպատի լալտնի պրոֆեսոր Պարրոտը 1829 թուականին Հալաստան գնաց՝ Արարատ սարը բարձրանալու փորձ կատարելու դիտաւորութիւնով: Բախտը մօտեցրեց նրան և Աքովեանին իրար հետ: Աքովեանը Պարրոտի վրալ ալնալիս լաւ տպաւորութիւն գործեց, որ սա չընկճուեց դժուարութիւնների առաջ նրան իրեն ուղեկից վերցնելու:

*) Բոյենշտեդտի ճանապարհորդակիցը:

համար,— երբ արդէն լաջող կերպով լաղթալարուել էին միւս զօռաբուծիւնները, որոնք, արւում էին բարձր հոգեորականութեան կողմից, իբրև բարոյական պարտաւորութիւն Արարատը բարձրանալու իւրաքանչիւր մի փորձի դէմ:

Առաջին փորձը (Արարատ բարձրանալու), որի ձեռնարկութիւնն առանց Աքովեանի էր կատարուել՝ անցաւ անլաջողութեւն Պարոտն իր 2-րդ անգամ սարը բարձրանալիս 15, 138. ոտնաչափ բարձրութեան հասաւ, իսկ երրորդ փորձի ժամանակ արդէն (26—28 սեպտ.) կարողացաւ իրօք հասնել մինչեւ ին ղեռ. ջրհեղեղից սկսած ոչմէկ մարդու ոտք չկոխած Արարատի գագաթը,— ալդ բոլորը պարտական էր նա մեծ մասամբ Աքովեանի ջանքերին և խոհականութեան:

Գերմանացի գիտնականը շատ հաւանեց երիտասարդ հային և իր վերադարձին դէպի հայրենիք վերցրեց նրան իր հետ դէպի Դորպատ, որտեղ նա նրան հօր նման խնամեց և վեց տարի շարունակ իր հաշուով ուսանել տուաւ:

Այս վեց տարիներն Աքովեանի կեանքի երջանիկ շրջանն էին կազմում: Նա տեսաւ իր աչքերի առջև բացուած մի նոր աշխարհ, և նա ամեն բան իւրացրեց ալնպիսի եռանդով և ընդունակութեամբ, որ շուտով նա գերմանական շրջապատին իրեն կատարելապէս ընտելացած զգաց, Յայտնի լեզուագէտներ, որոնց աշակերտում էր Աքովեանը, շատ լաւ վկայութիւն էին տալիս նրա հոգեկան ընդունակութիւնների մասին. և ալն անձնութիւնն ու երախտագիտութիւնը, որ ցոյց էր տալիս նա դէպի իր ուսուցիչները, ցոյց էին տալիս նրա սրտի ազնուութիւնը: Իր երախտագիտութիւնը ցոյց էր տալիս նա դէպի ամեն մի բան, ինչ գերմանական անուն էր կրում. և երբ նա իր հայրենիքը վերադարձաւ՝ ոչ մի բան չէր խնայում կովկաս և Հայաստան այցելող գերմանացիներին օգտակար լինելու համար: Նա իր կեանքի նպատակ էր դրածրել գերմանական քաղաքակրթութիւնն ու լեզուն վրացիների և հայերի մէջ տարածելը: Հարիւրից աւելի երիտասարդ ասիացիների ալնտեղ էր հասցրել— երբ ես նրա հետ ծանօթացալ 1844— որ նրանք թէ բանաւոր և թէ գրաւոր կերպով կարողանում էին գերմաներէն լեզուով իրենց միտքն անսալթաբ արտայայտել: Դորպատից վերադառնալուց լետով նա մի շարք տարիներ անցկացրեց Թիֆլիսում, որտեղ նա բացառապէս իր երիտասարդ հայրենակիցների կրթութեամբ էր

գրադուած: Սակայն նա չափազանց անձնուէր էր և ոչ-գործ-
նական բնաւորութեան տէր մարդ, որպէս զի հին սկզբունքը
թէ՛ մշակն արժանի է իր վարձին՝ իր անձի վերաբերմամբ էլ
գործադրէր: Յաճախ ընկնում էր նա զրամական նեղութեան
մէջ, որն և նրա համար անվերջ թշուառութեան աղբւր
դարձաւ: Միրզա-Շաֆին ¹⁾ մի անգամ շատ լաւ նկատեց նրա
մասին. «Աբովեան ավալինջը արմենին դըր, քի արմենին
եօխդըր»—մի խօսք, որ կրկնակի նշանակութիւն ունի,—Ա-
բովեանն առաջին հալն է, որ հալ չէ (ալսինքն՝ ընչաքաղց և
կաշառակեր մարդ), և՛ Աբովեանն առաջին հալն է, որ ու՛հե-
տ և Աբովեանը հալ չէ (բառի վատ նշանակութեամբ):

Իր դորպատեան բարեկամների միջոցով ստացաւ Աբո-
վեանը, որն ալդ միջոցին մի գերմանուհու հետ ամուսնացել
էր, Երեանի գաւառական դպրոցի տեսչի պաշտօնը,—սակայն
ալնքան չնչին ռոճկով, որ նա ալդքանով միայն ողորմելի
ապրուստ ունենալ կարող էր:

Նա շատ ազնիւ էր և չէր կարող հարստանալու համար
սովորական ճանապարհին դիմել. նրա բոլոր փորձերը՝
իր գիտական աշխատութիւններից շահուելու համար՝ անցան
անլաջող: Այսպէս օրինակ, նա մեծ աշխատասիրութեամբ և
ժամանակ գործադրելով կազմել էր այսօր ժողովրդի բերա-
նում կենդանի արդի հայերէնի քերականութիւն և բառարան
և ուղարկել էր Պետերբուրգ այն լուսով, թէ՛ գիտութեանց
ձեմարանն իր հաշուով տպագրել կտալ նրանց, իրեն էլ մի
չափաւոր օժանդակութեամբ կխրախուսէ ապագայ աշխատու-
թեանց մէջ: Նրա սպասածը չկատարուեց:

Աբովեանի մտադրութիւնն էր—²⁾ նրա բոլոր աշխատու-
թիւններն ալդ ծրագրի համեմատ էին կատարուում—հիմնել նոր
հայկական գրականութիւն և ալդ ճանապարհով իր հալրենա-
կիցների կրթութիւնն ազգային հիմունքների վրալ դնել: Ար-
դէն առաջ նկատել եմ ես, որ հին-հայերէնը վաղուց արդէն
մեռած կամ գիտնականների լեզու է դարձած, որի մատենա-
գրական հարուստ գանձերը նսլն իսկ երկրի մէջ սակաւ ընտ-

¹⁾ Միրզա-Շաֆին, շահանշաւի իմաստունին, հանդիպում է Բո-
ղենշտեղա Քիֆլիտում, որի մօտ և սովորում է նա թուրքերէն՝ իր ճա-
նապարհորդութիւնը մասամբ դիւրացնելու նպատակով: Բողենշտեղա
գրի է առել և տպագրել նաև լիշած լայտնի Միրզա-Շաֆիի իմաստունա-
պատմութեանը և երգերից: Ա.

րեալներին է մատչելի։ Աբովեանն ուզում էր ալս դանձերից ամենալաւերը նոր հալրերէնի փոխադրել—պահելով հանդերձ հին տառերը—և ալդ ապահով ու դիւրին միջոցով կրթութիւն տալածել իր հալրենակիցներին մէջ և նրանցում գիտական հասկացողութիւն զարթեցնել։ Չէ որ հենց առաջ նոյն իսկ անդի զարգացած անձնաւորութիւններ ստիպուած են եղել Ս. Գրքի հալրէն տառերով թիւրքերէն թարգմանութիւնը կարգալ, մինչև որ Դիտրիխ՝ Ս. Գիրքը նոր-հալրէնի թարգմանելու փորձով մասամբ առնուեց չարիքի առաջը։

Իր ամենաընդունակ աշակերտների օգնութեամբ՝ հին հալրէնից և եւրոպական լեզուներից թարգմանութիւններ անելով Աբովեանը մի քանի տարում ժողովրդի ներկայ պահանջներին գոհացուցիչ գրականութիւն ստեղծած կլինէր, եթէ նրա ծրագրները ի դերև հասնած չլինէին։

Այն փոքրաթիւ տողերը, որոնք իմ հալ բարեկամի լիշատակին նուիրել էի ուզում՝ առանց դիտաւորութեան մի ամբողջ գլուխ դարձան։ Եւ չեմ կարծում, որ դրանով գերմանացի ընթերցողի մէջ դժգոհականութիւն առաջ բերած լինեմ։

Աբովեանը, որն այնքան նպաստել է հեռու Արեւելքում գերմանական անուան պատուին և ակնածութեանը, արժանի է, որ իր սեպհական անունն էլ Գերմանիաւում պատուի և ակնածութեան հասնի։

ԱՐ. ԱՐԵՂԵԱՆ

Լալայիդ, 14 յուլ. (ն. տ.).

